ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 404

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը (Մարմաշեն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված փարածական պլանավորման փասփաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Ախուրյան համայնքի (Մարմաշեն բնակավայրի գոփևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

1. *ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը (Մարմաշեն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-6 համակցված փարածական պլանավորման փասփաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (Մարմաշեն բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 08-078-0132-0037 կադաստրային ծածկագրով 0.52981 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր | 08-078-0132-0037 կադաստրային ծածկագրով 0.52981 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Ախուրյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մարմաշեն բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (Մարմաշեն բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «4» «հոկտեմբերի» 2024 թ.